ԽՈՐԱՅՐԵՔ ՁԵՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ

Գյուղատնտեսության հարաճուն զարգացումը սկսեց գրավել ավելի խոշոր տարածքներ և դուրս մղեց այդ վայրերում բնակվող կենդանիներին, իսկ բույսերի շատ տեսակներ ուղղակի վերացան: Կենդանիների որոշակի տեսակներ անհետացան կամ գտնվում են անհետացման եզրին: Էկոլոգիական հավասարակշռության խախտման արդյունքում աստիճանաբար սկսվեց հողերի աստիճանական քայքայումը, մակերեսային և գրունտային ջրերի աղտոտումը, ջրամբարների էվտրոֆացումը: Բնության մեջ էական փոփոխություններ մտցրեց արդյունաբերական հեղափոխությունը: Տեխնիկական միջոցների ի հայտ գալով աճեց հողօգտագործման ինտենսիվությունը, իսկ բնական պաշարների ինտենսիվ շահագործումը մեծացրեց շրջակա միջավայրի աղտոտման վտանգը:

Կենսաբազմազանության կորստի շարունակական աճող վտանգը կանխելու նպատակով 1948 թվական հիմնադրվեց Բնության և բնական պաշարների պահպանության միջազգային միությանը (IUCN): Միության կողմից մշակվեց և ընդունվեց Բնության պահպանության համաշխարհային ռազմավարությունը: Համաձայն ընդունված ռազմավարության՝ կենսաբազմազանության պահպանման համար գործադրվող ջանքերը պետք է տարվեն երկու զուգահեռ ուղղություններով՝ հազվագյուտ տեսակների հաշվառում և կենսաբանական տեսակների անհետացման պատճառների վերլուծություն, գնահատում և կասեցում: